ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿՅԱՆՔ

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱԶԱ՛Ր ԲԱՐԵՎ, ՀԱԶԱ՛Ր ԱՐԵՎ
Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Հայաստանի խորհրդայնացման բոլոր տարեդարձներուն մէնէն շքեղն ու երջանիկը ներկա 26-րդ տարեդարձն է, վասնզի ան կզուգադիպի ու կհամադրվի այն մյուս երջանիկ թվականին, ՆԵՐԳԱՂԹԻՆ՝ որ իր կարգին եկավ ա՛լ ավելի փառավորելու տարեդարձը և ավելի լուսավորելու այդ տարեդարձին արդեն իսկ լուսավոր նշանակությունը։ Անցնող 1945-ին զուգադիպող 25-րդ տարեդարձը ո՛չ նվազ կարևորության արժանի թվական մը և հանգրվան մը եղավ մեր ազգային-եկեղեցական պատմության համար։ Հայաստանի լուսամիտ Հանրապետության ավագանին, քալելով մեր ազգի անցյալ և նորագույն պատմության ուղիղ և անդական ճանապարհեն, հարգանոք և իրատես ոգիով ընդունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնա ծրագիրը՝ կազմելու ազգային-եկեղեցական համագումար և կատարելու հայրապետական ընտրություն։ Հայաստան սիրով բացավ իր դուռները արտասահմանի բոլոր պատգամավորներուն։ Ես չեմ հիշեր, մեր եկեղեցական պատմության մեջ, տոնե ավելի փառաշուք, ավելի անմահ թվական մը՝ քան 1945-ի ակտը ու կատարված բոլոր հանդեսներում մանրամասնությունները իսկ ամիսներե ի վեր խոսուն շարժանկարներով կցուցադրվին Սփյուռքի բոլոր գաղութներուն մեջ։

Ներգաղթը գործադրության դրվելիք հսկա ծրագիր մըն էր ու Սփյուռքեն Հայաստան հասնող եկեղեցական ու աշխարհիկ պատգամավորներ անձամբ տեսնելե հետո մեր նվիրական Հայրենիքի անհավատալի, աննըման վերելքը, յուրաքանչյուրը հազիվ իր շըրջանը վերադարձած, սկսավ հարազատ թարգմանը ըլլալ հոն իր բոլոր տեսածներուն, խոսքով, գրով ու գրքույկներով, ու առանց «խոսքի վաճառականներ» ըլլալու, մեծապես սատարեց ժողովրդի միտքը պատրաստելու դեպի ՆԵՐԳԱՂԹ։ Ներկա Հայաստան պետականություն մըն է, իր բոլոր օրկաններով, վարչական, տնտեսական, կրթական, ելմըտական, ճարտարարուեստական, երկրագործական ու մանավանդ զինվորական։ Հայրենական ահավոր պատերազմը տասնյակ հազարավոր զոհեր տարավ մեզմե, ավա՜ղ, բայց կռվող, հաղթական ու պատերազմը շահող զոհեր, որոնք մեռան պաշտպանելու համար տարիներե ի վեր հոն նշմարված բոլոր աշխարհի հիացումին առարկան հանդիսացած ստեղծագործ աշխատանքը։

Ահա թե ինչո՛ւ բացառիկ կարևորություն ու անկեղծ համատարած հիացումի առարկա կդառնա ներկա 26-րդ տարեդարձը, նոր հույսերու և նորագույն տեսիլքներու բոցավառ արշալույսներով։ Մեր ծառայասեր ոգին միայն, մեր անկեղծ նվիրումը միայն, մեր սերը միայն պիտի զորեն հավերժացնելու հազարավոր լուսալի տարեդարձներ։

Հազա՛ր բարև, հազար արև՛ նման բոլոր տարեդարձներուն։

(«Ժողովուրդ» թիվ 657–658, 1946 թ.)